# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@ mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 201 8թվականի N 26-Ա

## ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03.1 2.201 8Թ. ԹԻՎ 1 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 1 4-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին **որոշում է**

**Հաստատել նիստի հետևյալ օրակարգը**

1 . Խաշթառակ համայնքի սեփականությունը հանդիսացող վարձակալական գյուղատնտեսական հողերի վարձավճարի տարեկան չափը սահմանելու մասին
2. 201 9թ. համար Խաշթառակ համայնքի Մանկապարտեզ ՀՈԱԿ կազմակերպություն հաճախող երեխաների վարձավճարների և կիրառվող զեղչերի չափերը հաստատելու մասին
3. 201 9թ. համար Խաշթառակի ենթակայության շենք-շինություններից վարձակալությամբ տարածք հատկացնելու դեպքում վարձավճարի չափը սահմանելու մասին
4. 201 9թ. համար Խաշթառակ համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
5. Խաշթառակի համայնքապետարանի և ենթական կազմակերպության / մանկապարտեզ ՀՈԱԿ/ գույքագրման տարեկան արդյունքները հաստատելու մասին
6. Խաշթառակ համայնքի 201 8թ. տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՔԱՄԱԼՅԱՆ ԷՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@ mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 27-Ա

## ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, համայնքի ավագանին **որոշում է**

1. Խաշթառակ համայնքի սեփականությունը հանդիսացող վարձակալական գյուղատնտեսական հողերի վարձավճարի տարեկան չափ սահմանել 1/մեկ/ հա-ի համար 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ
2. Ուժը կորցրած ճանաչել Խաշթառակ համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 03-ի թիվ 23-Ա որոշումը
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՔԱՄԱԼՅԱՆ ԷՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@ mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 201 8թվականի N 28-Ն

### 201 9Թ. ՀԱՄԱՐ << ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ >> ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԶԵՂՉԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 1 4-րդ հոդվածի 1 -ին մասի 1 3-րդ կետով, << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 1 8-րդ հոդվածի րդ կետով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**

1 . 201 9թ. համար հաստատել Խաշթառակ համայնքի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող մեկ երեխայի վարձավճարի չափը 5000 / հինգ հազար / դրամ

2. Միևնույն ընտանիքից երկու երեխա մանկապարտեզ ընդունելու դեպքում վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր երեխայի համար 4000 / չորս հազար / դրամ

3. Սահմանել անվճար հետևյալ դեպքերում՝

ա/ մեկ ընտանիքից երրորդ երեխային ընդունելու դեպքում

բ/ առաջի կարգի հաշմանդամ, բազմազավակ /չորս և ավելի երեխաներ ունեցող երեխաներ, ծնողներ /համար

գ/ միակողմանի և երկողմանի ծնողազուրկ երեխաների համար

3. ՈՒժը կորցրած ճանաչել Խաշթառակ համայնքի ավագանու 201 7թ. նոյեմբերի 03-ի թիվ 24-Ն որոշումը

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՔԱՄԱԼՅԱՆ ԷՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@ mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 201 8թվականի N 29-Ն

### 201 9Թ. ՀԱՄԱՐ ԽԱՇԹԱՌԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 1 8-րդ հոդվածի 1 -ին մասի 21 -րդ կետով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, համայնքի ավագանին **որոշում է**

1 . 201 9թ. համար Խաշթառակի համայնքապետարանի ենթակայության շենք-շինություններից վարձակալությամբ տարածք հատկացնելու դեպքում տեղական վճարը սահմանել 1 /մեկ/ քմ-ի համար տարեկան 800 /ութ հարյուր ՀՀ դրամ
2. ՈՒժը կորցրած ճանաչել Խաշթառակ համայնքի ավագանու 201 7թ. նոյեմբերի 03-ի թիվ 25-Ն որոշումը

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՔԱՄԱԼՅԱՆ ԷՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@ mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 201 8թվականի N 30-Ն

201 9Թ.ՀԱՄԱՐ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 8-րդ հոդվածի առաջին մասի 1 8 կետի , << Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 1 0-րդ, 1 1 -րդ,1 2-րդ հոդվածների <<Աղբահանության և սանիտարական մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 4 հոդվածի և << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Խաշթառակ համայնքի ավագանին **որոշում է**

**201 9 թվականի համար Խաշթառակ համայնքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը**

*կետ* << 1 >> Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան շենքերի, շինությունների / ներառյալ ոչ հիմնական/ շինարարության / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական շենքերի և շինությունների համար
*ենթակետ* <<1 />>, մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 1 5000 դրամ.
*ենթակետ* <<2/>>, *սույն կետի* <<1 />> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
*պարբերություն* <<ա.>>/ 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ.
*պարբերություն* << բ.>>/ 500-ից մինչև 1 000քմ ընդհանուր մակերես ունեցող ունեցող շենքերի և շինությունների համար՝50000 դրամ.
*պարբերություն* <<գ.>>/ 1 000-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես

ունեցող շենքերի և շինությունների համար՝50000 դրամ
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
*ենթակետ* <<3/>>, մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝3000 դրամ
*ենթակետ* <<4/>>,20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ
*կետ* <<2.>>, Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվություն տալու համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ
*կետ* <<3.>> Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
*ենթակետ* <<1/>>, ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
*պարբերություն* <<ա. >> / մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի թույլտվության դեպքում՝ 3000 դրամ
*պարբերություն* <<բ. >> / 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի թույլտվության դեպքում՝ 10.050 դրամ
*պարբերություն* <<գ.>> 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի թույլտվության դեպքում՝ 13.050 դրամ
*ենթակետ* <<2.>> ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
*պարբերություն* <<ա.>>/ մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի թույլտվության դեպքում՝ 2000 դրամ
*պարբերություն* <<բ.>>/ 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.050 դրամ
*պարբերություն* <<գ.>> 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի թույլտվության դեպքում՝ 13.050 դրամ
կետ <<4.>>, Համայնքի տարածքում բնակվող և գործունեություն ծավալող ֆիզիկական և իրավաբանական անձանց դեպքում աղբահանության վճարը կենցաղային աղբի համար սահմանվում է՝
ենթակետ <<1 .>>, Ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և / կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար, ամսական՝50 դրամ
ենթակետ <<2.>>, Առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ, ամսական՝1 քառ.մ- 35 դրամ
ենթակետ <<3.>>, Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ, ամսական՝1 քառ.մ- 6 դրամ
ենթակետ <<4.>>, Կրթական, մշակութային, առողջապահական շինություններ, ամսական՝1 քառ.մ- 3 դրամ
ենթակետ <<5.>>, Ըստ զանգվածի ՝ մեկ տոննա աղբի համար՝ 5000 դրամ
ենթակետ <<6.>>, Ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝2000 դրամ
*կետ* <<5.>>, Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին

գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրքը սահմանվում է՝
այլ արտաքին գովազդի համար՝ 1 500 դրամ
*կետ* <<6.>> 201 8 թվականի համար սահմանվում է տեղական վճարի հետևյալ դրույքաչափերը՝
*ենթակետ* <<1 />> համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլնման աշխատանքների համար՝ համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝5000 դրամ.
*ենթակետ* <<2/>> համայնքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 5000 դրամ
*կետ* <<7.>> ՈՒժը կորցրած ճանաչել Խաշթառակ համայնքի ավագանու 201 7 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 26-Ն որոշումը

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՔԱՄԱԼՅԱՆ ԷՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 31-Ա

## ԽԱՇԹԱՌԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ / ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ/ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել
1. Խաշթառակի համայնքապետարանի և ենթակա կազմակերպության / Մանկապարտեզ ՀՈԱԿ/ 2018 թվականի գույքագրման տարեկան արդյունքները համաձայն 1,2 հավելվածների
Առդիր 5 թերթ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՔԱՄԱԼՅԱՆ ԷՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@ mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 201 8թվականի N 32-Ա

## ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 201 8 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 8-րդ հոդվածի 1 -ին մասի 5-րդ կետով և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, Խաշթառակ համայնքի ավագանին **որոշում է**

1 . Խաշթառակ համայնքի 201 8 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի կառավարման ապարատ գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածից պակասեցնել 750.000 ՀՀ դրամ.
Նշված գումարն ուղղել կառավարման ապարատի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4657 /այլ կապիտալ դրամաշնորհներ/ հոդվածին համայնքի մանկապարտեզի երկրորդ հարկի հիմնանորոգում ծրագրին համաֆինանսավորելու համար
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՔԱՄԱԼՅԱՆ ԷՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**